ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝

Իրավունքի և
քաղաքականության
Ինստիտուտի տնօրեն
Մ.Ա. Քալաշյան

"12" հոկտեմբերի 2022 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի և քաղաքականության
Ամբիոն՝ Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի

Հեղինակ՝ Զոհրաբյան Ն. Յու.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Կրիմինալիստիկական տեսություն և տակտիկա

Մագիստրոսական ծրագիր՝ 042802.03.7 Կրիմինալիստիկա

Դասիչ մասնագիտություն՝ 042802.00.7 Իրավական ուսումնասիրություններ

ԵՐԵՎԱՆ

1. **Ներածություն.**

Կրիմինալիստիկայի դերն ու նշանակությունը կայանում է նրանում, որ լինելով հանցագործության դեմ պայքարի առաջնագծում, գործնական մակարդակում այն ապահովում է իրադարձության հետագծային պատկերի հաստատումը կրիմինալիստիկական մեթոդներով և միջոցներով:

Կրիմինալիստիկայի, քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի փոխգործակցությունը կարելի է սահմանել որպես իրավաբանական գիտությունների քրեաիրավական ուղղվածության միասնական համակարգի ինքնուրույն տարրերի հարաբերակցություն: Վերջինս արտահայտվում է, մի կողմից, նրանում, որ կրիմինալիստիկայի շատ դրույթներ ընկալվում են օրենսդրի կողմից և ստանում իրավական կարգավորում, մյուս կողմից, քրեական դատավարության մասնակիցների գործունեության ընթացակարգային կարգավորումը և հանցագործությունների քրեաիրավական բնութագիրը հիմք են հանդիսանում քննչական գործողությունների, քննության ալգորիթմների ստեղծման, տակտիկական առաջարկությունների մշակման համար: Կրիմինալիստիկական գործունեության ընթացքում ծագում են քրեադատավարական հարաբերություններ:

Քրեական և քրեադատավարական օրենքների կիրառման արդյունավետության հարցերը մեծապես կախված են կրիմինալիստիկայի գիտական ներուժի օգտագործումից: Վերոնշյալ հանգամանքը կանխորոշում է կրիմինալիստիկայի դերն ու նշանակությունը ոչ միայն քրեաիրավական ցիկլի իրավական գիտությունների համակարգում, այլև պրակտիկ գործունեության շրջանակներում:

2. **Դասընթացի նպատակը և խնդիրը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել կրիմինալիստիկայի նշանակությունը, կարևորությունը, ընդգծել նրա միջոլորտային բնույթը: Ներկայացնել արդի հիմնախնդիրները, ուսումնասիրել կրիմինալիստիկայի տեսության տարրերը: Ուսումնասիրել կրիմինալիստիկայի տակտիկական ընդհանուր հիմունքները,

առանձնակի ուշադրություն դարձնել կրիմինալիստիկական վարկածներին, քննության պլանավորմնա արդի հիմնախնդիրներին:

2.1. Կրթական վերջնարդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողները **պետք է.**

իմանան՝

- կրիմինալիստիկայի հիմնական մեթոդները,
- առանձին հանցագործությունների վերաբերյալ տակտիկական մոտեցումները,
- կրիմինալիստիկական տեսության և տակտիկայի ընդհանուր տեսության հիմնական դրույթները,
- քրեագիտական հասկացությունները եւ կատեգորիաները,
- քննչական գործողություններ կատարելու տակտիկան,

կարողանան՝

- արդյունավետ իրականացնել քրեական գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական տվյալներ ստանալու նպատակով արդյունավետ քննչական գործողություն կատարելու համար անհրաժեշտ գործիքակազմի և հնարքների ընտրության հմտությունները,
- իրականացնել տարբեր տակտիկական մոտեցումներ հանցագործությունների առանձին տեսակների քննության վերաբերյալ,

ունակ լինեն՝

- կիրառել առանձին քննչական գործողությունների նախապատրաստման և անցկացման տակտիկական հնարքները,
- կիրառել հետքերի եւ իրեղեն ապացույցների հայտնաբերման, ֆիքսման եւ առգրավման տեխնիկա-քրեագիտական միջոցները եւ մեթոդները,
- կիրառել դատավարական փաստաթղթերի պատրաստման հմտությունները,
- կառուցել կրիմինալիստիկական վարկածներ և իրականացնել քննության պլանավորում,
- իրականացնել կրիմինալիստիկական դիագնոստիկա:

2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Ուսումնական աշխատանքների տեսակները	Ամբողջը, ակ. ժամ.	Բաշխում ըստ կիսամյակների					
		1 Կիս.	2 Կիս.	3 Կիս.	4 կիս.	5 Կիս.	6 Կիս.
1	2	3	4	5	6	7	8
1.Ըստ կիսամյակի ընդհանուր դասընթացի ուսուցման ծանրաբեռնվածությունը	144	144					
1.1. Լսարանային պարապմունքներ:	54	54					
1.1.1. Դասախոսություններ	36	36					
1.1.2. Սեմինարներ	18	18					
1.2. Ինքնուրույն աշխատանք	90	90					
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	Քննություն	քննություն					

2.3.Դասընթացի թեմատիկ պլան

Դասընթացի բաժինները և թեմաները	Ընդհանուր (ակ. ժամ)	Դասախոսություններ (ակ. ժամ)	Սեմինար (ակ. ժամ)	Պարապմունքների այլ տեսակներ (ակ. ժամ)
Թեմա 1. Կրիմինալիստիկայի հասկացությունը և առարկան	10	4		6
Թեմա 2. Կրիմիմալիստիկայի գիտության օբյեկտները և խնդիրները	10	4		6
Թեմա 3. Կրիմինալիստիկայի համակարգը	10	4		6
Թեմա 4. Կրիմինալիստիկայի ֆունկցիաները, աղբյուրները և սկզբունքները	12	2	2	8
Թեմա 5. Կրիմինալիստիկայի մեթոդները	12	2	2	8
Թեմա 6. Կրիմինալիստիկական նույնացում	14	4	2	8

Թեմա 7. Կրիմինալիստիկական դիագնոստիկա	**12**	**2**	**2**	**8**
Թեմա 8. Կրիմինալիստիկական տակտիկայի հասկացությունը	**12**	**2**	**2**	**8**
Թեմա 9. Տակտիկոկրիմինալիստիկական հնարքներ և հանձնարարականներ	**14**	**4**	**2**	**8**
Թեմա 10. Կրիմինալիստիկական վարկածների հասկացությունը և տեսակները	**12**	**2**	**2**	**8**
Թեմա 11. Վարկածների կառուցումը և ստուգումը	**14**	**4**	**2**	**8**
Թեմա 12. Քննության պլանավորման հասկացությունը, սկզբունքները և տեսակները	**12**	**2**	**2**	**8**
Ընդամենը	**144**	**36**	**18**	**90**

3. Դասընթացի բաժինները և թեմաները

Թեմա 1. Կրիմինալիստիկայի հասկացությունը և առարկան

Կրիմինալիստիկայի հասկացությունը որպես առարկա և որպես գիտություն: Կրիմինալիստիկայի առարկայի օբյեկտիվ օրինաչափությունների հակացությունը:

Թեմա 2. Կրիմիմալիստիկայի գիտության օբյեկտները և խնդիրները

Կրիմիմալիստիկայի գիտության օբյեկտներ հասկացությունը, հատկանիշները, տեսակները: Կրիմինալիստիկայի խնդիրները, նրանց դասակարգումը:

Թեմա 3. Կրիմինալիստիկայի համակարգը

Կրիմինալիստիկայի համակարգի հասկացությունը, բաժինները՝ կրիմինալիստիկայի ընդհանուր տեսություն, կրիմինալիստիկական տեխնիկա, կրիմինալիստիկական տակտիկա, կրիմինալիստիկական մեթոդիկա:

Թեմա 4. Կրիմինալիստիկայի ֆունկցիաները, աղբյուրները և սկզբունքները

Կրիմինալիստիկայի ֆունկցիաների հասկացությունը, աղբյուրների տեսակները: Կրիմինալիստիկայի սկզբունքների հասկացությունը, տեսակները համադրումը ընդհանուր գիտական այլ սկզբունքների հետ:

Թեմա 5. Կրիմինալիստիկայի մեթոդները

Կրիմինալիստիկայի մեթոդների հասկացությունը, դասակարգումը ընդհանուր և հատուկ մեթոդների: Կրիմինալիստիկայի մեթոդների օգտագործման չափանիշները՝ կրիմինալիստիկան գիտությունների համակարգում:

Թեմա 6. Կրիմինալիստիկական նույնացում

Կրիմինալիստիկական նույնացման հասկացությունը, գիտական հիմքերը, նշանակությունը: Խմբային (սեռային) պատկանելիության պարզումը կրիմինալիստիկայում: Կրիմինալիստիկական իդենտիֆիկացիայի օբյեկտները, դրանց հատկանիշները: Նույնացման հատկանիշների դասակարգումը:

Թեմա 7. Կրիմինալիստիկական դիագնոստիկա

Կրիմինալիստիկական դիագնոստիկայի հասկացությունը, առանձնահատկությունները: Դիագնոստիկական հետազոտությունների կատեգորիաները, նպատակները:

Թեմա 8. Կրիմինալիստիկական տակտիկայի հասկացությունը

Կրիմինալիստիկական տակտիկայի հասկացությունը, հիմնանակ աղբյուրները: Կրիմինալիստիկական տակտիկայի համակարգը, զարգացման տենդենցները:

Թեմա 9. Տակտիկոկրիմինալիստիկական հնարքներ և հանձնարարականներ

Տակտիկոկրիմինալիստիկական հնարքի հասկացությունը: Տակտիկոկրիմինալ իստիկական հնարքի թույլատրելիության սկզբունքները: Տակտիկոկրիմինալիստիկակա ն հանձնարարականի հասկացությունը և տեսակները: Քննչական գործողության տակտիկա՝ ընդհանուր դրույթներ:

Թեմա 10. Կրիմինալիստիկական վարկածների հասկացությունը և տեսակները

Կրիմինալիստիկական վարկածների հասկացությունը: Կրիմինալիստիկական վարկածների տեսակները՝ ըստ ծավալի, ըստ առաջ քաշման սուբյեկտի, ըստ կոնկրետության աստիճանի:

Թեմա 11. Վարկածների կառուցումը և ստուգումը

Վարկածների կառուցման և ստուգման պրոցեսի փուլերի տեսակները: Վարկածներ կառուցելու կանոնների ուսումնասիրություն: Վարկածները ստուգելու կանոնների ներկայացում:

Թեմա 12. Քննության պլանավորման հասկացությունը, սկզբունքները և տեսակները

Քննության պլանավորման հասկացությունը: Քննության պլանավորման սկզբունքների տեսակները: Քննության պլանավորման բնութագիրը:

4. Գրականության ցանկ (պարտադիր և լրացուցիչ)

Իրավական փաստաթղթեր

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015թ. խմբ.):
2. ՀՀ օրենքը «Զենքի մասին», ընդունված է Ազգային Ժողովի կողմից 3 հուլիսի 1998 թ.
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է Ազգային Ժողովի կողմից *1* հուլիսի 1998 թ.
4. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է Ազգային Ժողովի կողմից 30.06.2021 *թ.*

Պարտադիր գրականություն

1. Ենգիբարյան Վ. Առանձին քննչական գործողությունների կատարման տակտիկա: Կրիմինալիստիկական տակտիկա | Գիտագործնական ձեռնարկ Երևան, Թասկ ՍՊԸ, 2018, 732 էջ
2. Ենգիբարյան Վ. Գ. Հանցագործությունների քննության մեթոդիկա: Կրիմինալիստիկական մեթոդիկա: | Դասագիրք բուհերի իրավաբանական

ֆակուլտետների ուսանողների համար՝ երաշխավորված ՀՀ ԿԳՆ կողմից, Երևան, Թասկ, 2017, 608 էջ

3. Ենգիբարյան Վ. Գ. Հանցագործությունների քննության կազմակերպման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմքերը | Մենագրություն, Երևան, Անտարես, 2016, 256 էջ
4. Չախոյան Ա. Մասնագետի հատուկ գիտելիքների և դրանց կիրառման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմնախնդիրները | ԵՊՀ հրատ., Երևան, 200 էջ:
5. Ենգիբարյան Վ. Գ. Առանձին տեսակի հանցագործությունների քննության մեթոդկիա (Կրիմինալիստիկական մեթոդիկա) | Ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2009, 416 էջ
6. «Ժամանակակից գիտական տեխնոլոգիաների և մեթոդների կիրառումը փորձաքննության ոլորտում» Միջազգային գիտաժողովի նյութեր, ԵրևանԾաղկաձոր, 16-17 հունիսի 2015թ./ ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրո, խմբ. Խորհուրդ՝ Ա.Ջավադյան և ուրիշ.- Երևան-Ծաղկաձոր, 2015, 245 էջ:
7. «Դատափորձագիտական գործունեության արդի հարցերը, դատական փորձագիտության եվ քրեագիտության ժամանակակից խնդիրները, զարգացման միտումներն ու հեռանկարները» միջազգային գիտագործնական գիտաժողովի նյութերի (թեզիսների) ժողովածու նվիրված հայաստանի հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի«փորձաքննությունների ազգային բյուրո» պոակ-ի հիմնադրման 15-ամյակին 2019թ. սեպտեմբերի 25-27, Երևան
8. Ենգիբարյան Վ. Կրիմինալիստիկական տակտիկայի էությունն ու գիտական հիմքերը | Դատական իշխանություն, Երևան, No. 8-9 (206-207), 2016, 86-94 էջեր
9. Ենգիբարյան Վ. Դեպքի տեղի զննության տակտիկական առանձնահատկությունները քրեական դատավարության և կրիմինալիստիկայի համատեքստում | Դատական իշխանություն, Երևան, No. 2-3 (200-201) 2016, (74-81 էջեր)

10. Лаврухин, С.В. Криминалистика как наука и учебная дисциплина: учеб. пособие / С.В. Лаврухин. – Саратов: СГАП , 2010. – 50 с.
11. Яшин, Р.Е. Криминалистическая диагностика незаконного предпринимательства / Р.Е. Яшин // Нижегор. правовая акад. – Н.Новгород: НПА , 2009. – 51 с.
12. Смахтин, Е.В. Криминалистика: соотношение с уголовным и уголовно-процессуальным правом / Е.В. Смахтин. – М.: Юрлитинформ, 2009. – 231 с.
13. Драпкин, Л.Я. Криминалистика: учебник / Л.Я. Драпкин, В.Н.Карагодин. – М., 2008. – 663 с. 5. Егоров, Н.Н. Криминалистика (вопр. и ответы) / Н.Н. Егоров. – М., 2010. – 236 с.
14. Егоров, Н.Н. Криминалистика / Н.Н. Егоров, Е.П. Ищенко, Н.Е. Мерецкий – Владивосток: И зд-во ТГЭУ , 2010. – 256 с.
15. Зайцев, В.Н. Криминалистика: учеб. пособие / В.Н. Зайцев, А. Хаитжанов // Федер. агентство по образованию, Пенз. гос. ун-т. – Пенза: Изд-во ПГУ, 2009. – 293 с.
16. Эксархопуло, А.А. Криминалистика: учебник / А.А. Эксархопуло. – СП б.: Лема, 2009. – 902 с. 9. Суденко, В.Е. Криминалистика: учебник / В.Е. Суденко. – Пятигорск: Изд-во Сев.- Кавк.ГТУ , 2008. – 575 с.
17. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս / Ղազինյան Գ.Ս. և ուրիշ.- 4-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով.-Եր: ԵՊՀ հրատ, 2019
18. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (մինչդատական վարույթ): Մաս 2 / Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան. – Եր.: Տիգրան Մեծ, 2017
19. Վարդանյան Ա. Ժ., Սուտ ցուցմունքների կանխման և մերկացման հիմնահարցերը, ատենախոսություն ի.գ.թ. գիտական աստիճանի հայցման, Երևան, 2005
20. Օհանյան Լ.Պ. Կրիմինալիստիկա: Բուհական դասագիրք. (2-րդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով).- Եր.- ԵՊՀ հրատ., 2010

Լրացուցիչ գրականություն

1. Драпкин, Л.Я. Криминалистика: учебник / Л.Я. Драпкин, В.Н.Карагодин. – М., 2008. – 663 с.
2. Егоров, Н.Н. Криминалистика (вопр. и ответы) / Н.Н. Егоров. – М., 2010. – 236 с.

3. Егоров, Н.Н. Криминалистика / Н.Н. Егоров, Е.П. Ищенко, Н.Е. Мерецкий – Владивосток: И зд-во ТГЭУ , 2010. – 256 с.
4. Зайцев, В.Н. Криминалистика: учеб. пособие / В.Н. Зайцев, А. Хаитжанов // Федер. агентство по образованию, Пенз. гос. ун-т. – Пенза: Изд-во ПГУ, 2009. – 293 с.
5. Эксархопуло, А.А. Криминалистика: учебник / А.А. Эксархопуло. – СП б.: Лема, 2009. – 902 с. 5. Суденко, В.Е. Криминалистика: учебник / В.Е. Суденко. – Пятигорск: Изд-во Сев.- Кавк.ГТУ , 2008. – 575 с.

5. Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները:

Խմբային քննարկում. Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված տեսական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր և տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, գիտական էթիկայի պահպանման կարողություն:

Ելույթներ ըստ թեմայի. Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում:

Գնահատման չափանիշները՝ պլանի առկայություն և դրան հետևելու կարողություն, տեսական և իրավական աղբյուրների օգտագործման էթիկա, հղումների ճշգրտություն, տեսակետների պատճառաբանվածություն:

Թեստավորում. Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները:

Վերջնական քննություն. Նպատակը՝ ստուգել և գնահատել ուսանողների գիտելիքները:

6.Պրակտիկ բլոկ

Սեմինար և պրակտիկ պարապմունքների պլան:

Պարապմունքի տեսակ – տրամաբանական հարցերի և խնդիրների լուծում:

Ստուգման ձևը - բանավոր հարցում:

7. Մեթոդական բլոկ

Ինքնուրույն աշխատանքի մեթոդական ապահովումը.

Ուսուցման մեթոդները դասախոսի և ուսանողների համատեղ գործունեության միջոցներ են՝ ուղղված կրթական նպատակների ձեռքբերմանը:

Ուսուցման մեթոդներն իրենց մեջ ներառում են դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներ:

Դասավանդման մեթոդների օգնությամբ հաղորդվում են գիտելիքներ, ձևավորվում են կարողություններ և հմտություններ: Ուսումնառության մեթոդների օգնությամբ ուսանողները ձեռք են բերում անհրաժեշտ գիտելիքներ, ձևավորվում կարողություններ և հմտություններ: Գնահատման մեթոդները միտված են արժանահավատ կերպով ուսանողների կողմից կրթական վերջնարդյունքների ձեռքբերման չափմանը:

Այս մեթոդները փոխկապված են և շատ դեպքերում դասավանդման մեթոդը կարող է հանդես գալ որպես ուսումնառության մեթոդ կամ նաև գնահատման մեթոդ:

Դասավանդման և ուսումնառության մեթոդները պետք է.

- լավագույնս նպաստեն կրթական վերջնարդյունքների ձևակերպված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը ուսանողների կողմից,
- կիրառվեն ուսանողների գիտելիքների և ընդունակությունների տարբեր մակարդակներում,
- լինեն բազմատեսակ,
- խրախուսեն ուսանողների ակտիվությունը լսարանում, ինքնուրույնությունը և տրամադրեն խմբային աշխատանքի հնարավորություններ, ըստ անհրաժեշտության,
- համապատասխանեն ուսուցման նպատակներին,
- ավելի արդյունավետ բացահայտեն նյութի բովանդակությունը,
- նպաստեն ուսանողների և դասախոսների արդյունավետ հաղորդակցմանը,
- համապատասխանեն նյութատեխնիկական բազայի հնարավորություններին,

- դասախոսների մասնագիտական կարողություններին և թեմային հատկացված ժամաքանակին:

Ժամանակակից դիդակտիկայում գոյություն ունեն մեթոդների տարբեր դասակարգումներ: Վերջին ժամանակներում դասավանդման կարևոր պահանջներից է ուսանողների ակտիվության ու մասնակցության ապահովումը ուսուցման գործընթացում:

8. Մագիստրոսական թեզի թեմաների հնարավոր ցանկ

1.Կրիմինալիստիկայի գիտության զարգացման հեռանկարները:

2.Քննության պլանավորման արդի հիմնախնդիրները:

3.Կրիմինալիստիկական դիագնոստիկայի կիրառումը ապացուցման ժամանակ:

4.Կրիմինալիստիկայի դերն ու նշանակությունը քաղաքացիական դատավարությունում: